

—≡ Ս Ի Ո Ն ≡—

Լ.Դ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1960

◀ Ապրիլ — Մայիս ▶

Թիւ 4-5

Ս. ԶԱՏԿԻ ՊԱՏԳԱՄ

«Փառք յարուբեան քո, Տէր»

Հաւատացեալ ժողովուրդ Հայոց որ ի Հայաստան և ի Սփիւռս աշխարհի : Սիրնի բարձունքին վրայ հանգչած Սրբոց Յակոբեանց դարաւոր Ուխտաւայրէն, Բրիստոսի չարչարանաց և հրաշափառ Յարութեան լուռ վկայ՝ Սրբաւորեաց հին քարերէն և հրաշագործ այրերէն կը միացնենք մեր ձայնը, Բրիստոնեայ աշխարհէն բարձրացող հրճուանքի և ուրախութեան ձայնին՝ ու կը գոչենք «Փառք հրաշափառ յարութեան քո, Տէր» :

Կեցած ենք նորէն, Միաբանութիւն և ուխտաւոր ժողովուրդ, Ս. Յակոբեանց Տաճարի հնադարեան կամարներուն տակ, երբ տակաւին մեր ականջներուն մէջ կ'արձագանգեն տխուր և ապա յաղթական շարականները, զորս թափօրներով պտտցուցինք Խաչի ճամբով մինչև Գողգոթա և Գողգոթայէն մինչև այն քարը՝ որ բացաւ մարդերու յոյսին առջև յարութեան արշալոյսը :

Մեզմէ ոմանց յոյգերը չեն հանդարտած տակաւին, ի յուշ պահերուն զորս ապրեցանք Խաչի ոտքին ծնրադիր «Խաչի քո Բրիստոս երկիր պազանեմք»ը կրկնելով, և չեն չորցած թերևս ոմանց արցունքները, որովհետև մեզմէ ամէն ոք Բրիստոսի հետ խաչելութիւն մը յիշեց երբ ըսաւ « և զսուրբ զշարշարանան քո բարեբանեմք » :

Որքան քաղցր է յիշատակը տառապանքին ու ցաւին, երբ կ'ապրուի Խաչի խորհուրդին մէջ և կը նայի Յարութեան հաւատքի լոյսին :

Այս է իմաստը քրիստոնեայի կեանքին. Խաչի ճամբուն վրայ հաւատալ յարութեան և յարութեան ուրախութեան ընդմէջէն վերլիշել Խաչի ճամբան :

Մենք այս առաւօտ չենք կրնար չլիշել տառապանքի և անձկութեան օրերը՝ զորս ապրեցաւ մեր Աթոռը և մեր Աթոռին հետ Հայաստանեայց Եկեղեցին : Մենք չենք կրնար պահել այսօր որ այդ օրերուն զացինք Բրիստոսի Գերեզմանին, սրտագեղ մըմնջելու .

«Ի՞նչ յարուցեալ զժապիտ ի վերայ Սիրնի,

ժամանակ զթալոյ նորա հասեալ է ժամ» :

Իսկ այսօր, նոյն Սիրնի բարձունքէն կ'ոգեկոչենք՝ աւելցնելով,

«Փառք յարութեան քո, Տէր» ,

որովհետև զթացիր «ի վերայ Սիոնի» և անոր ուխտեալ որդիներուն, և յարու-
թիւն տուիր արդարութեան, ճշմարտութեան և սիրոյ ողիւն:

Փառք կու տանք յարուցեալ Փրկչին որ այս տարի ևս շնորհեց մեր սի-
րեցեալ երկրին, առատութեան և խաղաղութեան իր պարգևը:

Փառք՝ որ ներշնչեց մեր սիրելի կառավարութեան՝ արդարութեան և
հանրօգուտ ձեռնարկութեան ուղին:

Փառք՝ որ անցուց փայլը թագաւորական Գահին և անոր արդարակորով
և արի Գահակալ Հիւսէյն Ա. Թագաւորին:

Որովհետև անոնց հովանիին և հոգածու բարեխնամութեան կը պարտինք,
Միաբանութիւն և Ժողովուրդ, մեր ուրախ և ապահով կեանքը, իսկ Ս. Աթոռ՝
պաշտպանութիւնը իր ներքին օրէնքներուն, աւանդութիւններուն, կանոնաւո-
րութեան և հանդարտութեան, ընդդէմ օտարամուտ խառնակիչներուն և խռ-
վարաներուն:

Որովհետև Հայոց զոհողութիւններով շահուած դարաւոր իրաւունքները,
Միաբանութեան տքնութեամբ պաշտպանուած առանձնաշնորհումները և մեծ
Պատրիարքներու օրով շէնցած մշակութային և կրօնական կեանքը՝ միակ երաշ-
խաւորներն են Հայց. Եկեղեցւոյ անստատնութեան և անպարտելիութեան:

Փոթորիկներ շատ եկած և փշրուած են այս պարիսպներուն տակ, փա-
ռասիրութիւններ ասուպի նման անցած են մեր երկինքէն և հողինքէն, բայց
պահպանուած ու պաշտպանուած է մեր Ս. Աթոռը, որովհետև միշտ եղած են
հարազատ սիրտերէ բլլսող աղօթքներ. — «Դու յարուցեալ զթացիս ի վերայ
Սիոնի»:

Հաւատացեալ Ուխտաւորներ,

Դուք որ եկաք հեռուներէն և ակոնատես վկաները եղաք փառաշուք
տօնակատարութեանց, Վանքի մէջ տակաւ խաղաղութեան, գիտակցութեան և
պարտաճանաչութեան ձգտող կեանքին, որ լաւագոյն գրաւականն է վաղուան,
վերադարձէք ձեր տունները և տարէք հայկական Սիոնէն հողեկան արիւթեան
աննուաղ կայծը՝ զոր դարեր շարունակ ձեր հաւատաւոր նախնիքները առեր
են այս սրբազան վայրէն ու պահեր իրենց ընտանեկան խորաններուն վրայ
յորդուց որդի: Ինչ որ մեր պատմութիւնը ըրած է այնքան սրտառուչ բայց
նոյնքան աննահանջ իր դարաւոր դժոխքին մէջն իսկ, ատիկա բխումն իսկ է իր
սրբավայրերուն: Հայրենիքէն հեռու, բայց սրբութեամբ գերագոյն կեդրոնի մը
մէջ՝ Ս. Յակոբը կը մնայ նոյն Լուսաւորչի կանթեղ մը Հայուն հողեկան աշ-
խարհին վերև մշտավառ ու պայծառ:

Դարձէք և ձեզի սպասող սիրելիներուն տուէք Սիոնի յոյն ու Տիրոջ
օրհնութիւնը, և բարեբանեցէք Աստուածը մեր հայրերուն, որ իր ցրուած
փոքրիկ հօտը դեռ կը պահէ ու կը պահպանէ այս օտարութիւններուն մէջ՝
օրհնուած ու գեղեցիկ օրերու համար, որուն խոր հաւատքով է որ կ'ապրինք
մենք բոլորս:

Տէրը ի բարին կատարէ բոլորիս ուխտը և տայ մեզի բազմաթիւ տարի-
ներ ևս երթալ և բոլորուիլ իր Ս. Գերեզմանին շուրջ, ուրախ սրտով և զօհու-
նակ հոգիով երգելու համար՝ «Փառք յարութեան քո, Տէր»: